ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.

ՈՐՈՇՈՒՄ

18 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 15-Ն

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի դրույթներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ճամբարակ համայնքի 2016 թվականի հողային հաշվեկշիռը՝ կատարված փոփոխություններով /կցվում է/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ՎԱՉԳԵՆ
2. ԱՐԱՄՅԱՆ ՆՎԵՐ
3. ԲԱԼՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՐՈ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԱԻՐԱ
6. ՍԵՎԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

3. Համայնքի ղեկավար՝ Յու.Ավալյան

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ
ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

առ.01.07.2016թ.

Համայնքի հողային հաշվեկշռի ելակետային տվյալներում կատարվել է փոփոխություն

1.Համաձայն Ճամբարակ համայնքի ավագնու 17.09,2013թվ. N 22-Ա և Ճամբարակ համայնքի ղեկավարի 26.09.2013թվ. N 38-Ա որոշումների փոխվել է Գ. Նժդեհի 1/3 հասցեում գտնվող 05-002-0175-0001 ծածկագրով 0.104 հա բնակավայրի այլ հողի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողերի և անհատույց մշտական օգտագործման տրամադրվել է ՀՀ գյուղատնտեսական նախարարությանը՝ անասնաբուժական կենտրոն կառուցելու համար:

2. Համաձայն ՀՀ վարչապետի 22.12.2009թվականի N1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 08.11.2013թվ. նիստի N 2 արձանագրության N 6 կետի տրված դրական եզրակացության՝ Ճամբարակ քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի նախագծի փոփոխության վերաբերյալ և համայնքի ավագանու 16.07.2013թվ. N 20 նիստի որոշման փոխվել են համայնքի սեփականությունը հանդիսացող 05-002-0276-0030 ծածկագրով 0.1225 հա, 05-002-0273-0013 ծածկագրով 0.1225 հա արոտավայրերի և 05-002-0305-0019 ծածկագրով 0.1250 հա վարելահողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողերի՝ խորքային հորեր կառուցելու համար: Գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների:

3. Հողի հարկի բազային տվյալները ճշտելու արդյունքում նվազել են

Քաղաքացիների սեփականությունը հանդիսացող գյուղնշանակության վարելահողերի և խոտհարքների ընդհանուր մակերեսը, փոխարենը նույն չափով ավելացել են համայնքային սեփականության նույն հողատեսքերը:

Քաղաքացիների սեփականությունը հանդիսացող տնամերձ հողամասերի ընդհանուր մակերեսը :

4. Համայնքի ղեկավարի կողմից ուղղակի վաճառքով և աճուրդի միջոցով հողատեսքերի օտարման արդյունքում փոփոխություններ են կրել 2-րդ և 4-րդ բաժինների հողատեսքերը ըստ սեփականության սուբյեկտների: